ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Նյութական ռեսուրսների պլանավորումը ժողովրդական տնտեսության կառավարման համակարգի անքակտելի մասն է։ Ժողովրդական տնտեսության կառավարման համակարգում հիմնական տեղը պատկանում է կենտրոնացված պլանավորմանը՝ պայմանավորված արտադրության միջոցների հասարակական սեփականության տիրապետությամբ։

Նյութական ռեսուրսներով հասարակության պահանջմունքների պլանային բավարարումը ենթադրում է պլանավորման հաշվեկշռային մեթոդի լայն օգտագործում։ Պլանավորման կատարելագործման, գիտական հիմնավորվածության և հավասարակշռվածության բարձրացման նպատակով հատուկ ուշադրություն է դարձվում նյութական հաշվեկշիռների մշակման հարցերին։ Ներկայումս խնդիր է դրվում տերիտորիալ նյութական հաշվեկշիռներ մշակել բոլոր միութենական հանրապետություններում։ Ճիշտ է, որոշ հանրապետություններում այդ ուղղությամբ աշխատանքներ կատարվել են, բայց դրանք հիմնականում ընդգրկում են արտադրանքի սահմանափակ անվանացանկ և չեն կարող էական դեր խաղալ տնտեսությունների կոմպլեքսային զարգացման տերիտորիալ պլանների կազմման գործում։

Նյութական ռեսուրսների պլանավորման ժամանակ առաջին հերթին հաշվի է առնվում արտադրանքի անվանացանկը, որի հիման վրա մշակվում են նյութական հաշվեկշիռները և կազմվում բաշխման պլանները՝ ճյուղային և տերիտորիալ կտրվածքով։

Նյութական ռեսուրսների վերարտադրության պլանավորման հիմքում ընկած է արտադրանքի անվանացանկի առանձնացումը։ Նյութական ռեսուրսների անվանացանկն ընդգրկում է արդյունաբերության, ինչպես նաև ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի արտադրական ձեռնարկությունների արտադրանքի տեսակները (ցանկը)։

Սոցիալիստական շինարարության տարիներին նյութական ռեսուրսների անվանացանկը մշտապես փոփոխման է ենթարկվել՝ կապված ժողովրդական տնտեսության կառավարման, պլանավորման կատարելագործման, արտադրության զարգացման, դեֆիցիտայնության աստիճանական վերացման, կառավարման առանձին օղակների միջև ֆունկցիաների վերաբաշխման հետ։ Ֆ. Էնգելսը գրել է, որ «բաշխման եղանակը էականորեն կախված է բաշխվող պրոդուկտների քանակից, և որ այդ քանակը, իհարկե, փոփոխվում է արտադրության ու հասարակական կազմակերպության պրոգրեսի հետ միասին և, հետևաբար, պետք է փոխվի նաև բաշխման եղանակը»[1]։

Ներկայումս արտադրանքի անվանացանկը, բաշխման եղանակից ելնելով, բաժանվում է մի քանի խմբերի.

[1] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 2, էջ 626։

1. Ժողովրդատնտեսական պլանի անվանացանկ։ Այստեղ մտնող նյութական ռեսուրսների հաշվեկշիռները և բաշխման պլանները մշակում է ՍՍՀՄ պետպլանը և հաստատում ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը։ Այսպես, նշված անվանացանկում 1966 թ. պլանով ընդգրկված էր 370[2], 1972 թ. պլանով՝ 275[3], 1977 թ. պլանով՝ 277[4], իսկ 1978 թ. պլանով՝ 315[5] անուն արտադրանք։

2. Կենտրոնացված պլանավորվող արտադրանքի անվանացանկ, որի հաշվեկշիռները և բաշխման պլանները՝ ա) մշակում և հաստատում է ՍՍՀՄ պետպլանը։ Այս խմբի մեջ մտնող արտադրանքի անվանացանկը 1966 թ. պլանով ընդգրկել է 1538[6], 1972 թ. պլանով՝ 1633[7], 1977 թ. պլանով՝ 1669[8], իսկ 1978 թ. պլանով՝ 1751[9] անուն արտադրանք. բ) մշակում են համգլխմատվաճառները (սոյուզգլավսնաբսբիտները) և ՍՍՀՄ պետմատը անմիջականորեն։ 1977 թ. պլանով այս խմբի մեջ մտնում էր շուրջ 13200[10] անուն արտադրանք. գ) մշակում և հաստատում են միութենական, միութենական-հանրապետական մինիստրություններն ու գերատեսչությունները։ Նշված մինիստրությունների, գերատեսչությունների թիվը հասնում է մոտ 50-ի, որոնք բաշխում են մոտավորապես 40000[11] անուն արտադրանք։

3. Ապակենտրոնացված պլանավորվող և բաշխվող արտադրանքի անվանացանկ։ Այս խմբի մեջ մտնող արտադրանքի բաշխումը իրականացնում են. ա) միութենական հանրապետությունների պետպլանները, բ) հանրապետական մինիստրությունները և գերատեսչությունները, գ) աշխատավորների դեպուտատների տեղական սովետները, դ) ՍՍՀՄ պետմատի տերիտորիալ վարչությունները, ե) ուղղակի տևական տնտեսական կապերով աշխատող արտադրական միավորումները և ձեռնարկություններն անմիջականորեն։

Ինչպես տեսնում ենք, ժողովրդական տնտեսության մեջ նյութական ռեսուրսների բաշխման հարցերով զբաղվում են բազմաթիվ կազմակերպություններ։ Ընդ որում, դրանց միջև բաշխման ֆունկցիաների հստակ սահմանազատում (բաժանում) գոյություն չունի։ Մատակարարման առանձին գերատեսչական համակարգերի առկայությունը, բաշխման և փոխանակության կազմակերպման ֆունկցիաների շերտավորումը տարբեր տնտեսական օղակներում խոչընդոտում են նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը։ Ներկայումս ժողովրդական տնտեսության պլանների մշակման

---

2 П. П. Карпов, Распределение средств производства в новых условиях хозяйствования, М., 1972, էջ 152։

3 Նույն տեղում։

4 «Методы разработки материальных балансов», под ред. И. А. Калинина, П. П. Карпова, М., 1977, էջ 15։

5 Государственный плановый комитет Совета Министров СССР. «Номенклатура промышленной продукции для разработки проектов плана производства, балансов и планов распределения», М., 1977.

6 П. П. Карпов, նշվ. աշխ., էջ 152։

7 Նույն տեղում։

8 «Методы разработки материальных балансов», էջ 15։

9 Государственный плановый комитет Совета Министров СССР. «Номенклатура промышленной продукции для разработки проектов плана производства, балансов и планов распределения», М., 1977.

10 «Методы разработки материальных балансов», էջ 15։

11 Նույն տեղում։

ժամանակ արտադրանքի անվանացանկի ձևավորման սկզբունքները չափ ընդհանուր են և չեն կարող բավարարել տնտեսության զարգացման և բնակչության օրավուր աճող պահանջները։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանների մշակման մեթոդական ցուցումներում մանրամասն թվարկվում են նյութական ռեսուրսների անվանացանկի ձևավորման սկզբունքները և ժողովրդական տնտեսության պլանում դրանց ընդգրկման պահանջները։ Այսպես, ժողովրդական տնտեսության պլանում ներառվում է՝ ա) այն արտադրանքը, որի արտադրությունը որոշում է ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր ուղղությունները, տեմպերը և համամասնությունները, բ) բնակչության կենսամակարդակը որոշող սպառման առարկաների կարևորագույն տեսակները, գ) այն արտադրանքը, որի արտադրությունը և օգտագործումը արագացնում են գիտատեխնիկական առաջընթացը և ապահովում հասարակական աշխատանքի ծախսումների մեծ խնայողություն, դ) արտաքին առևտրի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող արտադրանքը, ե) այն արտադրանքը, որի արտադրությունը ապահովում է պաշտպանության պահանջները և հատուկ կարիքները[12]։

ՍՍՀՄ պետպլանում մշակվող կարևորագույն արտադրատեսակների հաշվեկշիռները և բաշխման պլանները հնարավորություն են տալիս ապահովել ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանների հավասարակշռվածությունը, կատարելագործել միջճյուղային և ներճյուղային համամասնությունները, բարելավել հասարակական արտադրության կառուցվածքը, գիտականորեն հիմնավորել ժողովրդական տնտեսության պահանջներն արտադրության միջոցների և սպառման առարկաների նկատմամբ, ավելի արդյունավետ օգտագործել հումքը, նյութերը, վառելիքը, էներգիան և այլն։ ՍՍՀՄ պետպլանի կողմից բաշխվող արտադրանքի անվանացանկը իր հերթին կոչված է ապահովելու ա) ռացիոնալ միջճյուղային և ներճյուղային համամասնությունները ժողովրդական տնտեսության մեջ, բ) համապետական պահանջները, այդ թվում երկրի պաշտպանության և արտաքին առևտրի կարիքները, գ) շահագործման հանձնվող կարևորագույն կառույցների կենտրոնացված կոմպլեկտավորումը, ինչպես նաև մեքենաշինության հիմնական արտադրատեսակների կոմպլեկտավորումը, դ) նոր տեսակի նյութերի և կոմպլեկտավորվող արտադրանքի լայն կիրառումը ժողովրդական տնտեսության մեջ, ե) դեֆիցիտային արտադրանքի հիմնական տեսակների կենտրոնացված բաշխումը, զ) արդյունաբերության, գյուղատնտեսության, կապիտալ շինարարության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի պահանջմունքների բավարարումն արտադրության միջոցների նկատմամբ և բնակչության պահանջարկի բավարարումը սպառման առարկաների նկատմամբ՝ նրա գնողունակության աճին համապատասխան[13]։

Կարևոր հատկանիշները, որոնք դրված են այս կամ այն արտադրանքը ժողովրդական տնտեսության պլանի կամ ՍՍՀՄ պետպլանի անվանացանկում ընդգրկելու հիմքում, գրեթե կրկնվում են։ Դրանք հիմնականում հանգում են հետևյալին, ժողովրդական տնտեսության զարգացման համամաս-

---

[12] «Методические указания к разработке государственных планов развития народного хозяйства СССР», М., 1974, էջ 54։

[13] Նույն տեղում, էջ 646—647։

նությունների, երկրի պաշտպանության և արտաքին առևտրի պահանջների, բնակչության կենսամակարդակը որոշող սպառման առարկաների կարևորագույն տեսակների ապահովում, ինչպես նաև նոր տեսակի նյութերի և կոմպլեկտավորող արտադրանքի կիրառում ժողովրդական տնտեսության մեջ, որոնք արագացնում են գիտատեխնիկական առաջընթացը։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման պլանի և ՍՍՀՄ պետպլանի կողմից կենտրոնացված կարգով բաշխվող արտադրանքի անվանացանկը կազմում է արդյունաբերության իրացված արտադրանքի արժեքի մոտ 80 %-ը, իսկ մի շարք կարևոր արտադրատեսակների ընդհանուր ռեսուրսների մեջ (սև մետաղներ, վառելիք, նավթամթերքներ, քիմիկատներ և ռետինե տեխնիկական արտադրանք, անտառանյութ, շինանյութեր, ցելյուլոզ-թուղթ) այն հասնում է 90—100 %-ի։

Ներկայումս արտադրանքի անվանացանկի ձևավորման սկզբունքների ճիշտ մշակումը և հետագա կատարելագործումն էական նշանակություն ունեն հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման գործում։ Արտադրանքի անվանացանկի ճիշտ ձևավորումից մեծապես կախված է արտադրության պլանների ժամանակին և բարձր որակով կատարումը, ժողովրդական տնտեսության պահանջների բավարարումը և ընդլայնված վերարտադրության տեմպերի ապահովումը։

Ինչպես նշեցինք, սոցիալիստական հասարակարգում ժողովրդական տնտեսության կենտրոնացված պլանային ղեկավարությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է։ Միաժամանակ պլանավորումը, ինչպիսին էլ որ այն լինի ընդգրկման տեսակետից, չի կարող ապահովել ժողովրդական տնտեսության կառավարման բոլոր ֆունկցիաները՝ սկսած ՍՍՀՄ Մինիստրների խորհրդից, ՍՍՀՄ պետպլանից մինչև սկզբնական օղակը՝ ձեռնարկությունը։ Բավական է նշել, որ այժմ հայրենական արդյունաբերությունը թողարկում է ավելի քան 12 միլիոն անուն արտադրանք։ Այս պայմաններում նյութական ռեսուրսների խիստ կենտրոնացված բաշխումը չի կարող հաշվի առնել արտադրության մեջ տեղի ունեցող փոփոխությունները և ժամանակին ճշտումներ մտցնել։ Առանձին մինիստրություններ և գերատեսչություններ հաճախ ստիպված են լինում փոփոխություններ մտցնել արտադրության պլաններում, փոփոխություններ, որոնք բացասաբար են ազդում մատակարարումների ապրանքության, համաչափության, կոմպլեկտայնության, ժողովրդական տնտեսության պահանջների բավարարման վրա։ Սպառողները չեն կարող պատշաճ ազդեցություն գործել մատակարարների վրա։ Կենտրոնացված բաշխումը սահմանափակում է տեղերի նախաձեռնությունը նյութական ռեսուրսներով մանևրելու հարցում, ստիպելով տեղավորվել հատկացված ֆոնդերի շրջանակներում, խոչընդոտում է տնտհաշվարկային հարաբերությունների համակողմանի տարածումը։ Մատակարարները և գնորդները չեն կարող ընդհանուր համաձայնության գալ արտադրանքի մատակարարման բոլոր հարցերում։ Արտադրանքի որոշ տեսակների ընդգրկումը կենտրոնացված կարգով բաշխվող անվանացանկում իրեն չի արդարացնում։ Երբեմն այստեղ հն ներառվում այնպիսի արտադրատեսակներ, որոնք մտնում են ծավալուն (ներխմբային) անվանացանկի մեջ և դեֆիցիտային են։ Հետևաբար, կենտրոնացված կարգով բաշխվող արտադրանքի խմբային անվանացանկը տնտեսապես հիմնա-

վորված չէ։ Այսպես, որքանով է նպատակահարմար, երբ ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը զբաղվում է շինարարական ապակու, վուշի և ջութի պարկերի, թաղիքի և ֆետրե կոշկեղենի, մուշտակի-մորթեղենի արտադրանքի, կիսամուշտակի, գարեջրի բաշխման հարցերով։

Որոշ տնտեսագետներ գտնում են, որ նպատակահարմար է մատակարարումների պլանային առաջադրանքների կատարման ժամանակ արտադրանքը բաժանել հիմնական և երկրորդական նշանակություն ունեցող անվանացանկի։ Նման մոտեցումը, մեր կարծիքով, տնտեսապես անհիմն է և վնասակար, քանի որ վերջնական արդյունքի ստացման գործում երկու անվանացանկն էլ հավասարապես անհրաժեշտ են։ Մի շարք արտադրատեսակների արտադրության պլանավորումը և բաշխումը ժողովրդական տնտեսության պլանի անվանացանկից կարելի է հանել՝ թողնելով տերիտորիալ մարմինների իրավասության ներքո։

Արտադրության զարգացման ժամանակակից պայմաններում, երբ անընդհատ ավելանում է ժողովրդական սպառման ապրանքների արտադրության ծավալը և անհամեմատ ընդլայնվում դրանց տեսականին, շուկան հագեցվում է անհրաժեշտ ապրանքներով, ավելի լրիվ է բավարարվում բնակչության սպառողական պահանջարկը, կենտրոնացված կարգով բաշխվող ապրանքների անվանացանկը գնալով պետք է կրճատվեր։ Այդ կապակցությամբ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1960 թ. օգոստոսի 8-ի «Առևտրի հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշման մեջ նշվում էր, որ անհրաժեշտ է քննարկել կենտրոնացված կարգով բաշխվող պարենային և ոչ պարենային ապրանքների անվանացանկի կրճատման մասին հարցը և ընդլայնել միջհանրապետական մատակարարումների և միութենական կարիքների համար մատակարարումների պլաններով ապրանքների մեծածախ իրացման պրակտիկան[14]։ Սակայն գործնականում հակառակն է ստացվում։ Տարեցտարի ավելանում է կենտրոնացված կարգով բաշխվող ժողովրդական սպառման ապրանքների անվանացանկը։ Այն հիմնականում ավելանում է խմբային և ներխմբային տեսականու աճի և տեղական արդյունաբերության թողարկած մի շարք ապրանքներ բաշխման պլանների մեջ ընդգրկելու հետևանքով։

Տնտեսագիտական գրականության մեջ բազմիցս քննադատվել է ժողովրդական սպառման ապրանքների կենտրոնացված բաշխման գործող կարգը և նշվել, որ այն ժամանակակից պայմաններում չի համապատասխանում առևտրին ներկայացվող պահանջներին, խոչընդոտում է ապրանքաշրջանառության ծավալմանը, բացասաբար է ազդում բնակչության սպառողական պահանջարկի բավարարման վրա։ Հաճախ տեղերում վաճառքից բացակայում են այնպիսի ապրանքներ, որոնք շատ տեղերում բավարար քանակությամբ կան, կամ էլ գերնորմատիվային ապրանքային պաշարներ են գոյանում՝ առևտրի ցանցում եղած ապրանքների տեսականին և որակը սպառողական պահանջարկին չհամապատասխանելու պատճառով։ Ներկայումս, երբ շուկան հագեցել է ապրանքներով և բնակչությունն ավելի պահանջկոտ է դարձել ժողովրդական սպառման ապրանքների տեսականու և որակի նկատ-

---

[14] «КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК», т. VIII, М., 1972, էջ 113։

մամբ, անհրաժեշտություն է զգացվում կատարելագործելու ապրանքային ռեսուրսների պլանավորման, բաշխման կարգը և արդյունաբերության ու առևտրի փոխհարաբերությունները։

Ժողովրդական սպառման ապրանքների կենտրոնացված բաշխման կարգը վերանայելու, փոփոխելու վերաբերյալ կան տարբեր կարծիքներ։ Տնտեսագետների մի մասը գտնում է, որ ապրանքների կենտրոնացված բաշխումից կարելի է լրիվ հրաժարվել, այն փոխարինելով ազատ գնումներով՝ առևտրական կազմակերպությունների ներկայացրած պատվերների հիման վրա։ Այսպես, Վ. Զադորոժնին գրում է. «Ժամանակն է մանրածախ առևտրական ցանցը ապրանքներով մատակարարելու բաշխման մեթոդները փոխարինել առևտրականով։ Անհրաժեշտ է առևտրական կազմակերպություններին իրավունք վերապահել պատվիրելու և մատակարարներից գնելու ցանկացած ապրանքներ՝ ազատ առք ու վաճառքի հիման վրա։ Դա թույլ կտա նշանակալիորեն ընդլայնել ապրանքների գնումը այն ձեռնարկություններից, որոնց արտադրանքը վայելում է բնակչության պահանջը և կրճատելու գնումներն այն ձեռնարկություններից, որոնց արտադրանքը պահանջարկ չի վայելում»[15]։ Ն. Մարկինան գտնում է, որ «առանձին ապրանքային շուկաների հագեցմանը զուգընթաց անհրաժեշտ է դառնում անցում կատարելու պայմանագրերի հիման վրա ազատ մեծածախ առևտրին։ Դրանով առևտրական կազմակերպությունների գործունեությունը ձեռք կբերեր նախաձեռնող առևտրական բնույթ։ Դա կվերացներ մատակարարների համար գոյություն ունեցող ապրանքների իրացման երաշխիքը անկախ դրանց որակից, կուժեղացներ առևտրի տնտեսաշվարկային դիրքերը, հնարավորություն կտար վերջ տալու առևտրի հետ ունեցած փոխհարաբերություններում արդյունաբերության շարդարացված առաջնությանը»[16]։

Առաջարկություններ են արվում նաև այն մասին, որ կարելի է հրաժարվել պարենային և ոչ պարենային ապրանքների կենտրոնացված կարգով բաշխումից և այն փոխարինել միութենական կարիքների համար կատարվող հատկացումներով, ինչպես այդ արվում է անասնապահական մթերքները բաշխելիս[17]։ Առաջարկություններ կան նաև այն մասին, որ դեֆիցիտային ապրանքները նպատակահարմար է բաշխել կենտրոնացված կարգով, իսկ բավարար քանակությամբ արտադրվող ապրանքներն ազատ կերպով վաճառել մեծածախ տոնավաճառներում[18]։ Գոյություն ունի նաև միանգամայն հակառակ տեսակետ, ըստ որի նպատակահարմար է ընդլայնել կենտրոնացված կարգով բաշխվող արտադրանքի անվանացանկը[19]։

Նյութական ռեսուրսների կենտրոնացված բաշխումն անհրաժեշտ է ձիշտ զուգակցել տեղերի նախաձեռնության զարգացման հետ և պայմաններ ստեղ-

---

15 В. К. Задорожный, Повышать эффективность затрат в торговле, М., 1970, էջ 59։

16 Н. Г. Маркина, Совершенствование планирования товарного обеспечения розничного товарооборота («Торговля в развитом социалистическом обществе», М., 1977, էջ 89)։

17 Н. Н. Корженевский, Основные закономерности развития спроса в СССР, М., 1971, էջ 237։

18 Я. Л. Орлов, В. П. Шиманский, Реформа и торговля, М., 1970, էջ 77։

19 Н. А. Моисеенко, М. В. Попов, Теория воспроизводства и управление социалистической экономикой, М., 1976, էջ 200։

ժել արտադրության հետագա առաջընթացի և ժողտնտեսության, բնակչության պահանջների լրիվ բավարարման համար։ Չնայած բաշխման գործող կարգի որոշակի թերություններին, խոսք անգամ չի կարող լինել դրանից լրիվ հրաժարվելու մասին և անցում կատարելու ազատ առևտրին։ Այստեղ հարցը կարող է վերաբերել միայն բաշխման համակարգի կատարելագործմանը։

Արտադրանքի զգալի քանակության բաշխման հարցերով զբաղված են ճյուղային, միութենական-հանրապետական մինիստրությունները, գերատեսչությունները և մասնավորապես այնպիսիք, որոնք ունեն մատակարարման, իրացման հատուկ մարմիններ։ Նկարագրումս, ամբողջությամբ վերցրած, ինչպես նշել ենք, շուրջ 50 մինիստրություններ ու գերատեսչություններ բաշխում են ավելի քան 40 հազար անուն արտադրատեխնիկական նշանակության արտադրանք և ժողովրդական սպառման ապրանքներ։

ՍՍՀՄ մինիստրությունների և գերատեսչությունների պլաններում բաշխվող արտադրանքի անվանացանկը ընդգրկում է ա) ժողովրդական տնտեսության պլանի անվանացանկում մտնող արտադրանքը, բ) ՍՍՀՄ պետմատի կողմից բաշխվող արտադրանքը համամիութենական կարիքների, միջճյուղային և միջհանրապետական մատակարարումների ապահովման համար, գ) նոր տեսակի իրեր և արտադրանքներ, որոնք կարևոր նշանակություն ունեն ճյուղի զարգացման համար և հաշվի չեն առնված ժողովրդատնտեսական պլանի անվանացանկում, դ) ներճյուղային ու միջճյուղային համամասնությունները և կոոպերացված մատակարարումներն ապահովող արտադրանք[20]։

Ինչպես տեսնում ենք, ՍՍՀՄ մինիստրությունները և գերատեսչությունները նյութական ռեսուրսների բաշխման ժամանակ կրկնում են ՍՍՀՄ պետպլանի և ՍՍՀՄ պետմատի բաշխման ֆունկցիաները։ Արտադրության զարգացման արդի պայմաններում որևէ ճյուղի արտադրանքի թողարկման գործում առնվազն մասնակցում են արդյունաբերության շուրջ 40—50 տարբեր ճյուղեր, ենթաճյուղեր, իսկ տվյալ արտադրանքը նախատեսվում է օգտագործել ժողովրդական տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում։ Այս իրադրության մեջ ճյուղային մինիստրությունները, գերատեսչությունները առանձին-առանձին վերցրած չեն կարող նյութական ռեսուրսների ճիշտ բաշխում կատարել, առավել ևս որ ռեսուրսների շրջանառության պրոցեսի կազմակերպման ժամանակ առաջին հերթին հաշվի են առնվում գերատեսչական շահերը։ Որպես կանոն, նրանք աշխատում են առաջին հերթին բավարարել իրենց կազմի մեջ մտնող կազմակերպությունների, ձեռնարկությունների պահանջները, երբեմն նույնիսկ անտեսելով համապետական կարիքները և այլն։

Մեր կարծիքով, ՍՍՀՄ մինիստրությունները և գերատեսչությունները պետք է զբաղվեն միայն այնպիսի արտադրատեսակների բաշխման հարցերով, որոնք արտադրվում և սպառվում են տվյալ մինիստրության կամ գերատեսչության շրջանակներում, իսկ արտադրության միջոցների գերակշռող մասի բաշխման և իրացման ֆունկցիան նպատակահարմար և տնտեսապես արդյունավետ է կենտրոնացնել ՍՍՀՄ պետմատի համակարգում։

Նյութական ռեսուրսների զգալի մասը հանձնելով ՍՍՀՄ պետմատի մասնագիտացված գլխավոր վարչություններին և համապատասխան տերիտորիալ՝

---

20 «Методические указания к разработке государственных планов развития народного хозяйства СССР», էջ 54։

մարմիններին, հնարավորություն կստեղծվի դրանցով ազատ մանևրելու, մանրամասն ուսումնասիրելու ժողովրդական տնտեսության պահանջները և ժամանակին բավարարելու դրանք։ Միաժամանակ, դրանց փոխհարաբերությունների հիմքում ընկած կլինեն տնտեսական հաշվարկի սկզբունքները։

Ելնելով արտադրանքի առանձին տարատեսակների մանրամասնման կամ ընդհանրացման աստիճանից, տարբերում ենք ծավալուն, խմբային և ամփոփ պլանային անվանացանկ հասկացողությունները։ Ծավալուն անվանացանկն ընդգրկում է արտադրանքի բոլոր տարատեսակները մանրամասն թվարկումով՝ ըստ տիպերի, մակնիշի, պրոֆիլի, չափերի, արտիկուլների, տեսակների և այլն։ Խմբային անվանացանկը ներառում է արտադրանքի առանձին տեսակների խմբեր, որոնց միավորման հիմքում ընկած են որոշակի ընդհանուր հատկանիշներ (ելակետային հումքը, տնտեսական նշանակումը, տեխնոլոգիական պրոցեսի ընդհանրությունը և այլն)։ Ամփոփ պլանային անվանացանկի մեջ, որպես կանոն, մտնում են խոշորացված ապրանքային խմբեր, որոնց բաշխումը հաստատվում է ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման պլանով։

Ներկայումս ժողովրդական տնտեսության մեջ արտադրվող և սպառվող արտադրանքն անհրաժեշտ է խիստ գիտական դասակարգման ենթարկել։ Արտադրանքի անվանացանկն անհրաժեշտ է բաժանել մի քանի այնպիսի խմբերի, որոնք սերտորեն կապված լինեն իրար հետ և լրացնեն միմյանց։ Մեր կարծիքով, անհրաժեշտ է ստեղծել. ա) ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման պլանի արտադրանքի անվանացանկ, բ) ՍՍՀՄ պետմատի արտադրանքի անվանացանկ, գ) արտադրանքի տերիտորիալ անվանացանկ։

Կենտրոնացված կարգով բաշխվող արտադրանքի անվանացանկի հետագա ընդլայնումն անհնարին է տնտեսության դինամիկ զարգացման և գիտատեխնիկական առաջընթացի ներկայիս պայմաններում։ Կենտրոնացված կարգով բաշխվող արտադրանքի անվանացանկն աստիճանաբար պետք է կրճատվի և հասցվի այն աստիճանի, որպեսզի ապահովվեն ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի միջև անհրաժեշտ համամասնությունները։

Մեր կարծիքով, անհրաժեշտ է ՍՍՀՄ պետպլանի գործունեությունը հիմնականում կենտրոնացնել հեռանկարային պլանավորման, գիտատեխնիկական առաջընթացի արագացման, ժողովրդական տնտեսության համամասնությունների կատարելագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, նյութական ծախսումների կրճատման, ժողովրդական տնտեսության պլանավորման մեթոդոլոգիայի կատարելագործման խնդիրների լուծման վրա։

Նյութական ռեսուրսների բաշխման գործող կարգի թերություններից պետք է համարել առանձնացված ֆոնդերի և մատակարարումների պլանների ուշացած հաստատումը և արտադրության պլանների անհամապատասխանությունը դրանց նյութատեխնիկական մատակարարմանը։ Նյութական ռեսուրսների հաշվեկշիռների և բաշխման պլանների ամենամյա մշակումը չի համապատասխանում ժողովրդական տնտեսության զարգացման պահանջներին, քանի որ այդ դեպքում արտադրական ձեռնարկությունները, միավորումները ստիպված են լինում վերանայելու արդեն տարիներով ձևավորված տնտեսական կապերը և նորից փոխհարաբերությունների մեջ մտնելու։ Դրա հետևանքով խախտվում է ձեռնարկությունների անընդմեջ մատակարարումը,

արհեստական դժվարություններ են ստեղծվում մատակարարումների առաջադիմական ձևերի տարածման գործում։ Ժողովրդական տնտեսության նյութատեխնիկական մատակարարման առաջադիմական ձևերից մեկը մատակարարների և սպառողների միջև ուղղակի տնտեսական կապերի սահմանումն է։ Ուղղակի տնտեսական կապերի իրականացումը պահանջում է անցում կատարել արտադրության պլանների և նյութական ռեսուրսների ֆոնդերի պլանավորմանը՝ հեռամյակի համար տարեկան կտրվածքով։

Ներկայումս ժողովրդական տնտեսության զարգացման տարեկան և հեռամյա պլանները հաստատվում են խոշորացված անվանացանկով, որին հաջորդում է արտադրական միավորումների, ձեռնարկությունների արտադրանքի ծավալուն տեսականու մշակումը։ Այս դեպքում արտադրող-մատակարարող ձեռնարկություններն ընդունում են միայն այնպիսի պատվերներ, որոնց կատարումը համապատասխանում է արդեն պլանով սահմանված տեխնիկատնտեսական ցուցանիշների պահանջներին։ Սպառողն իր հերթին, հաճախ այլ ելք չգտնելով, ստիպված է լինում համաձայնվել մատակարարի առաջադրած պայմանների հետ, երբեմն ստանալով այնպիսի արտադրատեսակներ, որոնք լրիվ չեն բավարարում ներկայացվող պահանջներին։ Անհրաժեշտություն է զգացվում բաշխման մեխանիզմը կատարելագործել այս հաշվով, որպեսզի արտադրական միավորումների, ձեռնարկությունների տեսականու ծրագրերի հիմքում ընկած լինեն սպառողների կոնկրետ պահանջները։

Ներկայումս տարեկան կտրվածքով հեռամյա պլանները պետք է դառնան ելակետային բազա՝ մինիստրությունների, միավորումների և ձեռնարկությունների արտադրատնտեսական գործունեության պլանավորման համար։ Նպատակահարմար է կենտրոնացված կարգով ժողովրդական տնտեսության զարգացման հեռամյա պլանի նախագծում սահմանել արտադրանքի խոշորացված անվանացանկ։ Ժողովրդական տնտեսության հեռանկարային պլանների մշակման ժամանակ կազմվում են կարևորագույն արտադրատեսակների հաշվարկային նյութական հաշվեկշիռներ։ Դրանք ծառայում են ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարային պլանների գիտական հիմնավորմանը, արտադրության տարբեր ճյուղերի միջև համամասնությունների սահմանմանը, արտաքին առևտրի պահանջների որոշմանը։ Հաշվարկային նյութական հաշվեկշիռների կազմումը առաջադիմական քայլ է պլանավորման կատարելագործման ասպարեզում։

10-րդ հեռամյա պլանի կազմման համար ՍՍՀՄ պետպլանը մշակել է 232 կարևորագույն արտադրատեսակների հաշվեկշիռ, այն բաշխելով ըստ տարիների, ընդ որում, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի հաստատմանը ներկայացվող անվանացանկով նյութական հաշվեկշիռները կազմվում են առաջին անգամ։ Անհրաժեշտ է նշել, որ հեռամյակի համար կենտրոնացված կարգով սահմանված խոշորացված անվանացանկի այս քանակությունը բավարար համարել չի կարելի։ Ժողովրդական տնտեսության հեռամյա պլանի ավելի լրիվ հավասարակշռվածության ապահովման նպատակով անհրաժեշտություն կզգացվի ընդլայնելու արտադրանքի անվանացանկը և բաշխման պլանները։ Հիմք ընդունելով նշված անվանացանկը, ՍՍՀՄ պետմատը, մի-

նիստրությունները, միավորումները, ձեռնարկությունները սահմանում են իրենց գործունեության համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների ծավալուն տեսականու պահանջները և սահմանում արտադրության պլանների նախագծերը՝ համապատասխան տեխնիկատնտեսական ցուցանիշներով։ Այս ճանապարհով կազմված արտադրանքի տեսականու պլանի նախագիծը ՍՍՀՄ պետպլանին, պետմատին հնարավորություն կտա ճշտումներ մտցնելու խոշորացված անվանացանկում, այն համապատասխանեցնելով ինչպես սպառողների կոնկրետ պահանջներին, այնպես էլ ժողովրդական տնտեսության կարիքներին։ Միաժամանակ, հեղամյա պլանի ճշգրտված անվանացանկը ձեռք կբերի կոնկրետ բովանդակություն։

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ПЛАНОВОГО РАСПРЕДЕЛЕНИЯ МАТЕРИАЛЬНЫХ РЕСУРСОВ

РАДИК МИРЗОЯН

Резюме

Ныне номенклатура промышленной продукции, исходя из способа распределения, подразделяется на несколько групп: номенклатура народнохозяйственного плана, централизованно и децентрализованно планируемая номенклатура. При разработке планов развития народного хозяйства принципы формирования номенклатуры продукции в основном общие и не могут удовлетворять потребности народного хозяйства и населения.

Номенклатура продукции, централизованно распределяемая Госпланом СССР и в плане развития народного хозяйства СССР, составляет более 80% стоимости реализуемой продукции промышленности.

Своевременное выполнение планов производства, удовлетворение потребностей народного хозяйства и обеспечение высоких темпов расширенного воспроизводства во многом зависят от правильного формирования номенклатуры продукции.

В целях совершенствования системы планового распределения материальных ресурсов предлагается их преобладающую часть передать союзглавснабсбытам и соответствующим территориальным органам Госснаба СССР, что создаст необходимые условия для маневрирования, подробного изучения потребностей народного хозяйства и их удовлетворения. Деятельность Госплана СССР, на наш взгляд, необходимо в основном сосредоточить на вопросах перспективного планирования, ускорения научно-технического прогресса, совершенствования пропорций и методологии планирования народного хозяйства, повышения производительности труда, сокращения материальных затрат.